

Հայտարարություն

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խմբի ղեկավարությունը հայտարարում է առ այն, որ պատասխանատվություն է կրում

1) բանկի ֆինանսական վիճակը (բոլոր էական առումներով) արժանահավատորեն արտացոլող ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման համար, այն է՝

ա. հաշվապահական հաշվառման քաղաքականության ընտրության, խորհրդի կողմից հաստատման և դրա հետևողականորեն կիրառման համար,

բ. հիմնավորված գնահատումներ և հաշվարկներ կատարելու համար,

գ. Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջների պահպանման համար,

դ. հաշվապահական հաշիվների գրանցումների ճշգրիտ վարման համար,

ե ֆինանսական հաշվետվությունները բանկի գործունեության անընդհատության հիման վրա պատրաստելու համար,

2) Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին համապատասխանող արդյունավետ և հուսալի ներքին հսկողության համակարգի մշակման, ներդրման և գործունեության ապահովման համար,

3) բանկի ֆինանսական վիճակի վերաբերյալ ժամանակին և բավարար ճշտությամբ տեղեկատվություն ապահովող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխանող հաշվապահական հաշվառման գործուն համակարգի ներդրման համար,

4) բանկի ակտիվների պահպանության, խարդախությունների և անճշտությունների բացահայտման ու կանխման ուղղությամբ իր իրավասությունների սահմաններում, միջոցների ձեռնարկելու համար:

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ խմբում հաշվապահական հաշվառումը իրականացվում է՝ ղեկավարվելով «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքով, Ֆինանսական հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներով, ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված նորմատիվ ակտերով և բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականությամբ: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ ֆինանսական հաշվետվությունների կազմումն իրականացվում է ղեկավարվելով Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներով:

Վարչության նախագահ
(գործադիր տնօրեն)



Ա.Օսիայան

Գլխավոր հաշվապահ՝

Տ.Գալստյան